ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2024 թվականի N 1224

<<ՎԵՏՄԻՐ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմ>> ՀԿՀ-ի կողմից կազմակերպված ՀՀ ԼՄՎՀ ԳՀԾՁԲ-24/47 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել <<ՎԵՏՄԻՐ>> ՍՊԸ-ն:ՀՀ ԼՄՎՀ ԳՀԾՁԲ-24/47 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտում արձանագրել է անհամապատասխանություն և համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետի <<ՎԵՏՄԻՐ>> ՍՊԸ-ին տրվել է մեկ աշխատանքային օր՝ անհամապատասխանությունը շտկելու նպատակով,սակայն սահմանված ժամկետում <<ՎԵՏՄԻՐ>> ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունը չի շտկվել:

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> պարբերությամբ և նույն հոդվածի 2-րդ մասի պահաջներով ***որոշում եմ.***

1.<<ՎԵՏՄԻՐ>> ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

Ճիշտ է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.ՎԻՐԱԲՅԱՆ